

ՏԵՂԱԳՐՈՒԹՒՒՆ ՇՒՐԱԿԱՅ

(Շ-ր-ն-ի-ն-ի-ն-ը)

Գ. ՇՒՐԱԿ ԱՆՈՑ.

Գ-ե-ղ-ր-ո-յ- Շ ի-ր-ո-յ Ա-ն-ը.

1. Մեծ Փերկիտ, Տ. ուր և բերդ՝ փոքր փերկիտ է առ Կարուց զեռնոյն ի Օւարիշատ գաւառի:

2. Մեչիտի. Տ:

3. Կէտիկ սաթըմը. Տ:

4. Քիւրէկ-տերէ, շ. և Տ:

5. Շահնալար. Տ. բազում աւերակք են աստ:

6. Կէշիւա. Տ:

7. Ինձէ-տերէ, շ:

8. Փալարվան. շ:

9. Ուզուզը. շ: Անման և մեծաշէն եկեղեցի անկործան, զոգցես բազում մասամբք և շինուածովք համեմատ ըսքանչիլաշէն կաթուղիկէին Անույ. մինչև վկայի իւրեաւ, թէ և սա գործ է կամ Տրդատայ ճարտարապետի, կամ միոյ յաշակերտաց նորա ի կատարելութիւն արուեստին ժամանելոյ 5):

(5) Մքանչիկ ճարտարութիւն այս արուեստաւորի տայ կարծել թէ բազում ուներ իւր աշակերտ, զուցէ և աշակերտակիցս: Ի մասին Կաղուանու որ հանդէպ նորա ի ձախմէ Երասխայ ի լեռնային գեղջ մուտ՝ պատմեցին լինել եկեղեցի մի գերագոյն զկաթուղիկէն Անույ. և ասացին լսել ի ծերունեաց, զի ի շինել աշակերտին զկաթուղիկէն, ուսոցիչ նորին կացեալ իցէ կենդանի: Ոչ կարելով տանել եկեալ յայն գիւղ զայն եկեղեցի հակառակ աշակերտին՝ գերագոյն քան զնոյն շինեալ իցէ:

10. Պայրախատար. բերդ. շ. և Տ:

11. Շահաքերէկ. շ. նոր բերդ:

12. Միվրեկ. Տ: Սորա ի բացէ կայ վանք փոքրիկ. Կարմիր վանք ասի:

13. Ախուզում. շ. և Տ:

14. Քինէկ. Տ:

15. Երլանը. Տ:

Իսկ Չօռլու, և Պայլար աւերակք. Ի Պայլար գոյ մեծ եկեղեցի, և զիւղն պարսպափակ. սորա սահմանք անդաստանաց և խոտոց են ի ձեռս Խօշավանուց: Այսր զիւղն ժողովուրդք 55 ամօք յառաջ՝ գոլով զգուեալ ի յարձակմանց Լեզիկաց՝ ի ծածուկբանս զնեն ընդ շասան Խանի՝ իշխողին Արևանայ, և ժամադիր եղեալ, ինքեանք կան ի պատրաստի, և նա զգօրս արձակէ, որք ի մուտ գիշերի և անցուցեալ ընդ Ախուբան՝ յանկարծ գան, վարեալ տանեն զնոսա: Օտառջինն գաղթեցուցանէ յԱրարատեան դաշտի, ուր սրածութեամբ և ոչ տանելով օդոյն մին ի հնդէ հաղե մնան. և ասպա փոխադրին ի Գեղարքունիս յԱրքայագեղ. և յետոյ անտի ևս ի Յամաքաբերդ գիւղ անապատին Անանայ: Մին ի ծերունեաց որ դեռ ողջ կայ, պատմեաց մեզ:

16. Խօշավանք. շ: Յառաջ քան զմտանելը ի պարանոց թերակղզոյն, իբրև քրսան քայլ բացատ, կրկին չորեքուսի՝ հաղե չորս քայլ լայնութեամբ և երկայնութեամբ ի սրբատաշ քարանոց բրդաձև ելանէ և մի մի կաթուղիկէիւք աւարտէ, իբրև վնց քայլ ի միմեանց բացատ, և ընդ մէջն կամար ածեալ ընդ մին և ընդ միւսն, յորոյ վերայ ճանապարհ ի միոյ ի միւսն զընացից: Ի միումն ի միջի կայ սանդուղք:

ընդ որ ի վեր ելեալ, ի ներքոյ կաթուղիկէի նորա է պահարան, և գնացեալ ի վերայ կամօրին, միւսն կաթուղիկէն է խորանաւոր: Աւ զի սոքա իբրև զոյգ եկեղեցի ձեանան կրկին կաթուղիկէիւք, չունելով զեւրեաւ զայլ շինուած գոնէ աւերակաց, ասացաւ Խօշավանք, այն է զոյգ վանք, զի բառք Խօշա՝ առ Պարսիկս նըշանակէ զոյգ. ապա և սա, և որ այլուր կան և անուանին Խօշավանք, պարտ է զիտել, թէ զոյգ վանք:

Ի զոյգ շինուածոյ աստի, առ որով և ընդ որով լինել լինի մտանել ի թերակրզզին, զանուն էառ առ վերջնովք թէ գիւղն և թէ վանքն կոչել Խօշավանք:

Բագմութիւն գիւղականացն գաղթեցին ի հանդիպակաց Խարաքիլսէ գիւղըն, և այժմ հինգ վեց տունք աղքատիկք կան, և այն ընդարձակութիւն սահմանաց նորա որ ունի թէ գիւղն, և թէ զաւերակ շրջակայ գիւղորայիցն, իբրև երկից ժամուց ճանապարհ յաջմէ և յահեկէ, և ի ցամաք անդր տարածեալ, կայ մնայ անմշակ:

Չոր բարձրութիւն ունի ընդարձակ դաշտավայրն, զնոյն ունի և թերակրզզին, առ վանուքն սակաւ ինչ բարձրանայ, մինչև զիտել և զբարձունս քաղաքին Անուոյ, յորմէ ոչ կայ բացատ իբրև երկուց ժամուց ճանապարհ:

Յառաջ անցեալ ընդ պարանոցն, և շեղեալ ընդ վայրահակ երկայնեալ թերակրզզին քա՛ ի մի հազար քայլ, հասանէ նախ ի գերեզմանատունն, ուր կան և քանի մի գմբէթաւոր և խորանաւոր մատուռնք քայքայեալք:

Անտի մերձեայ յարևելակողմն վանաց, և քերեալ զընդարձակ որմովք նո-

րա հիւսսակողման, հասանէ ի բարձր և ի մեծադիր դուռն նորա, կամարակապ: Թեպէտ այսր կողման պարխապն ևս ընդարձակի իբրև չորս հարիւր քայլ, (այսպէս չափեալ իցեմ՝ որպէս յիշեմ.) այլ միւս կողմանցն որմունք որ արտաքս քան զվանսրն, աւերեալք են. որ կարծի թէ աստ բովանդակեալ լինէր հիւրանոցն, յորս այնչափ հսկողութեամբ և խնամովք մարդասիրութեան ընդունէին զհիւանդս, զաղքատս, զճանապարհորդս, և իբրև յիւրեանց տան հանգուցանէին:

Առ մեծի դրամքս երևին մնացորդք ինչ և աւերածոյք քարուկիր շինուածոց: Աւ ի հարաւ արևմտից ընթացեալ է իջևանըն՝ Վեվրան սարայ անուանեալ՝ բաղմասնեակ համակ յորձաքար վիմաց՝ սրբատաշ և կամարակապ: Չի ոչ միայն ուղղակի ճանապարհ ի Աարուց յԱրևան գնացից սա էր յամարան և ի ձմերան, որոյ հանդիպակաց բարձունքն սակաւք են, և զիւրաւ մտանեն յԱրարատեան դաշտ, այլ և զի կամուրջն կայր մօտաւոր սմա, և պէտք են իջևանի, որ ոչ սակաւ նպաստամատոյց շինութեան գիւղին:

Այլ և զի ուխտաւորք Աջմիածնի ընդ այս անցանէին, և այս վանք ի բարեզարդութեան վայել էր: Իսկ Օգուշարանին հաստատութիւն յԱղէքսանդրապօլիս, խոտորեցոյց զսոցա և զնոցա ուղի, և բարձումն կամրջին, եթող զսա անխնամ այսպէս մինչև ցայսօր. թող զայլ պատճառքս. այն է ամայութիւն երկրին, անօգուտ սինլիքորաց մնացորդք և հաւաքածոյք, ստեպ փոփոխութիւն Առաջնորդաց, և ունկնդրութիւն ո՛ր և իցէ սուտ և ճշմարիտ ամբաստանութեանց:

Ի մեծէ դրանէ անտի իրրև տան քոյլ յառաջ գնացեալ և շրջեալ յարեւելս, ընդ այլ դուռն մտանէ ի սրահ ինչ սալյատակ հանդէպ ժամատան դրանն: Ընդ ի սրահին են գեանափոր ամբարանոցք ի սրբատաշ քարանց կրով մածուցեալ, մեծամեծ և լայնարձակք:

Ի Չախմէ կան ձմերոց սենեակ, և ախոռք ձիոց, խոհանոց, մառան, և ընդարձակ գոմք եզանց և կովուց, ամենեքեան փայտակերտ ծածկութիւ. զոր Յովհաննէս Ապիսկոպոս է շինեալ:

Ի ծայր գոմոյն, առ հիւսսային կողմք ժամատանն մտեալ, երկայնի պարապորդ տեղի ինչ, մինչև ցհասանել ի խորանի տաճարին կողն, ուր կայ սենեակ քարուկիր, կամար նորա մեծաւ մասամբ քայքայեալ: Այս սենեակ փակեալ է ի միոյ կողմանէ պարսպին կցորդ, և ի միւս կողմանէ խորանին, իսկ ի թիկունս իւր պարիսպ բարձրագոյն քան զսենեակն է արտաքին պարիսպն:

Ի վերին կողմն սենեկիս են երեք կաթուղիկէք փոքրաղիր, միակարգ և միաձեւ դասաւորեալ, և կից պարսպին յարեւելս անդ: Աւ ցայս վայր աւարտին շինուածք այսր անձկագոյն կողմանն հիւսսի:

Իսկ ի նոյն երկրորդ դրանէ մտեալ, և յաջկոյս շրջեալ ընդ դուռն փոքրիկ մտանէ ընդ կամարակապ ինչ փոքրաղիր, առ որով և փոքրիկ արտաքնասենեակ. ընդ հանդիպակաց յայլ վայելչակերտ դուռն մտանէ ընդ մեծ սենեակ քառակուսի, ըսքանչելաշէն և զարմանալի. որմոցն դէմք անձէփ համակ մեծամեծ քարամբք ազուցելովք ի միոջէ և եթ կապուտ քարա-

հանքէ և յորձաքարանց սրբատաշ գործեալ, և մեծաղիր պատուհանաձև զբծովք շրջանակեալ, ի վերին կողմն բոլորակեալ: Ըստ ընդարձակութեան սենեկին և բարձրութիւն որմոցն զուգաչափ, ցայն վայր՝ յորմէ սկիզբն առնու ի գոյնզգոյն քարանց զկամարն քառակուսի քաղել, որոյ քանի մի կարգ քարանցն մնացորդք երևին, որք կարգ ըստ կարգէ այլ և այլ ձեւաւոր տաշոյիք դասաւորեալ են, մինչև ի պսակել ի կեդրոն միջակի կամարին, և անդ միայն թողեալ զպատուհան լուսանցոյց ըստ սովորութեան երկրին:

Սենեկիս այսմիկ ամրութիւն, քարանցն ընդ միմեանս ազոյցք, յորս չէ հնար մըտանել և սրածայր ինչ, և կամարին ըսքանչելի յօրինուած, և որ ի նոսա է արուեստաւոր չափակցութիւն, ոչ միայն ակն յայտնի քարոզէ, թէ արուեստագիտակ ճարտարապետի ուրուք է գործած, այլ և զուցէ թագաւորք Բագրատունեաց յորժամ եկաւորէին ի վանս, ի սմին սենեկի վանատուր եղեալ հիւրընկալէին և մեծարէին, զի և արժան է անուանել զսա Արքայարան և վայելուչ արքայի:

Այս սենեկի արեւմտեան որմն ի հիւրանոցն կցի: Իսկ ի հարաւ առ անկեամբն հիւսսի՝ այլ դուռն նորա է, ընդ որ մտանէ ի ներքնագաւթիմն կամարակապ, զթիկամբ սենեկիս տարածեալ, և ի հարաւակողմանն որմունք ձեւացուցանեն զայնր կողման պարիսպ, զի և չունելով տեղի զիւրավայր, չեն որիշ պարիսպք անդ, այլ ընդ դահավէժն հայի ի գեան:

Յորմունս սորա տեսաք աւազան ջրոյ քարակով ծորակարանօք, որ յայտնի ե-

րեին առ լուսացումն ձեռաց իցեն պատրաստեալ :

Աստուած ընդ այլ սքանչելաշէն կամարակապ դուռն մտանէ ընդ հրաշակերտ կերտուած ինչ լայնանիստ չորեքիւռսի, ի վերայ չորից սեանց ամբարձեալ, և ութեակ որմասիւնք խոյովք և ներքնախարսխօք, համակ ի միոյ կապուտակ քարահանքէ, մեծապաղաղ և սրբատաշ քարամբք: Ութ կամարք ի ձեւ ձեւ, և միջակին կամարն ունի լուսանցոյց, յորոց քանիք կործանեալ են, և այլք ի պատրաստի զնոյն կրել:

Յարեւելս հանդէպ դրան խորան, բայց ակն յայանի երևի թէ ի յեանոց իցէ ձեւացեալ, մատամբք իսկ ցուցեալ վկայեն դիրքն և շինուածքն, թէ անընկալուչ են այդմ :

Ի կամարակապ դօտիսն լի լի արձանագրութիւնք զեղեցկաքանդակք, որք եթէ ի յայտ գայցեն, ցուցանեն զսա յինչ պէտս շինեալ իցէ :

Ոմանք անուանեցին զսա Հոգևորական խորհրդարան, և հայեցեալ զի առ չորեքկողմեան որմովք ընդ մէջ որմասեանցն կան և կիսակամարք ի վերին կողմն շքրջանակաւորք, ասացին երկոտասան եպիսկոպոսաց աթոռ առ մէն միովքն եղեալ, ի խորհուրդ նստէին, թէ առ միով կամարան, որ յարևմուտս դուռն է :

Ոչ հակառակեմ, և համահաւան զբտանիմ եթէ զբաւոր յիշատակութիւն ինչ լեալ իցէ. բայց հայեցեալ նախ ի ներքնադաւթին ծորակաւոր աւազանն, և երկրորդ ընդ փոքրիկ արևելեան դուռն, որ յանկեան անդ հարաւակողման կից անկանի, և մտանէ ընդ խոհանոցն, յաւէտ կարծի սա սեղանատուն: Ալ այսպիսի

ողորմած և գթոտ վանաց արդարև այսպիսի վայելէ և սեղանատուն: Այլ որպէս ասացաք՝ արձանագրութիւնքն եթէ վասն պիտոյից կերլեաց իցէ, հաստատ զիմ կարծիս. իսկ եթէ այլ և այլ իրաց յիշատակարանք՝ և մերքս ցրեն :

Ի յիշատակելոյ դրանէ մտանէ ի հնաշէն մեծ խոհանոց, որ ունի ընդարձակ և լայնաղիւր կրակարանս կրկին կամարածիք մեն ի կարէ տանել երիս երիս մեծամեծ զալճինս կերակուր եփելոյ. երևի ունել և առաջնովքն փուռն հեցեփեաց կամ են պատուհանք պահեստից թոնրատանն որ անդ ի կիսաբոլորի խոհանոցին կայ. և թոնիրն իսկ այնչափ մեծաղիւր, զորոյ նմանակն չէ իմ տեսեալ ուրիք :

Անդ և աւազան ջրոյ ի միոյ մեծաքանակ քարէ կոփեալ : Իսկ կամար խոհանոցին քանքեալ, այժմ վայտակերտ է ծածկեալ, որպէս և մառանին, այլ չեն այժմ սոքա ի գործածութեան :

Ի հարաւ կոյս ի թիկանց կրակարանացն, և սեղանատանն աւարտեալ ի գահավեժն, չունեն զայլ պարխապ, ի հիւսիս անկանի մառանն, և յարևելից սեղանատանն կցի, և աւարտի ի հին առաջնորդարանն. ի կողմն հիւսսի. և աւարտի սա յարևելից ի ներքին սրահն :

Յայս վայր աւարտեալ, զառնամք ընդ որս մտաքն, և ելանիմք ի նոյն յերկրորդ դուռն : Առ արտաքնասանեկաւ կցեալ դասակարգեալ են վից փոքրաղիւր սենեակք կամարակապք, զթիլուռնս տուեալ սեղանատանն, և զբուրսն ունին հիւսսահայեաց. սոքա երևին եղբարց վանացն, և միաբանեկեցաց խցկունք :

ՏՆՊԱԳՐՈՒԹՒՒՆ ՇԻՐԵԿԱՅ

(Նորիննախնախնա)

Մերձեցեալ սոքա յանկիւն ժամատանն՝ դադարեն, և տան ուղի, ուր կայ և դուռն, ընդ որ մտանէ ի գաւիթ ինչ կամարակապ ըստ չափու ժամատանն երկայնեալ, ի ձախմէ կայ դուռն մտանելոյ ի ժամատուն. և ի հանդիպոյ նորա այլ դուռն, յոր մտանէ յայլ կրկնագաւիթ, յաջմէ՛ այն է յարեւմտից կուսէ Սեղանատանն կցեալ, և ի ձախմէ այլ սենեակըք, որոց թիկունք կան առ ներքին սրբահիւ զոր գրեւոց եմք, իսկ ի հարաւ կոյս թիկն տայ մտանին զոր գրեցաք:

Գրեա համակ կործանեալ են սոքա. միայն յորմուսն նորա տեսանին վայելչակերտ վառարանք. և մարթ է ասել թէ սա իցէ բնակարան վանահարց տեղւոյս:

Աշխալ արտաքս ի կրկնագաւթէս, յայն գաւիթ կամարակապ յարեւելից ելանէ ընդ դուռն հանդէպ հարսնարանին. ի ներքս առ դրամբն ունելով մեծ քարակոփ աւազան ջրոյ (6):

Ի հարաւոյ տաճարին, առաջի դրանն է սալայատակ սրահ, ուր կան և գետնափոր մեծամեծ ամբարանոց:

Հանդէպ դրանն անկանի հրաշակերտ եկեղեցին քառակուսի առ խորանաւ տա-

ճարին՝ հարսնարան անուանեալ (7): Միով խորանաւ, կամար նորա հարթաձև:

Ի վերայ ելեալ տաճարիս, ի վերայ նորա կան և այլ փոքրիկ երեք խորանաւոր կաթուղիկէք. որով յաջմէ և յահիկէ հաճարին դասակարգին սոքա, երեք երեք, համաչափ և միադի: Ի միջի ունելով և զկաթուղիկէ հաճարին մեծադիր, որով եկելոցն ի վանս և ի պարանոցէ անտի երեւեալ սովին դասաւորութեամբ, ի զարմանս ածեն զտեսողսն:

Աից սմին ի հարաւոյ և այլ մատուռն բոլորեալ կամարովք, փոքր քան զայն և երկայնութեամբ. զի խորեալ ի յետուստ կուսէ խորանի սորա, սրբատաշ քարամբք ի զեանոյ սկսեալ ի վեր հանէ զկրկին ամբարանոցս, զուցէ պահենի ցո-

(7) Պատճառ անուանելոյ հաճարիս յայս անուն, ոչ այլ ինչ լինել պարտի. այլ զուցէ վաղեմի սովորութիւն պարս է լինել յԱզգի անդ՝ մերում. զի յամենայն Աթուս, և յերեւելի վանորայս արգելեալ իմն է ի մեծի տաճարին զխորհուրդ Պսակի կատարել. զայս այսպէս ասացին մեզ և յԵրուսաղէմ. թէ որչափ և պատուաւորի հարսանիք պատահիցեն, չէ հնար ի հաճարի սրոյն Յակովբայ կատարել զխորհուրդդ, այլ յեկեղեցւոյ Հրեշտակապետի, որ է վանք Հաւատաւորաց, և եկեղեցի քաղաքացւոցն:

Յաւուրս Յովհաննու Արարեցւոյ հարկաւորեալ է վասն կնքահարս յԱ. Պօլոյ յԵջմիածին զալ, և անդ զխորհուրդդ կատարել. լուայ թէ ոչ ի Աթուղիկէն Առդարչապատիւ, այլ յեկեղեցին Գայիանիայ կատարեալ:

Եւ զի այս զիւղ չունի այլ որոշ եկեղեցի բաց ի Ա. անացն. և այս վանականքս որոշեալ են ի պէտս Պսակաղբութեան զսա՝ և հարսնարան անուանեալ են. իմ կարծիք այսպէս է:

(6) Ի վերին վանս չէք ջուր, և ոչ հոր. այլ պարտին կրել ի գետոյն ի վեր, և ի շինութեան վանացն յայտոսիկ ընուն, ի պէտս գործածել անտի:

րենոց, և ածեալ աւարտէ ցհաւասարութիւն երզնից եկեղեցւոյն, ուր է դուռն իջուցանելոյ և հանելոյ զցորեան:

Վարձեալ առննթեր սորա են և այլ երկու կամարակապ վարք, մին խաչաձև անկիւնէ յանկիւն ձգեալ, և յետոյ որոշեալ, և ի թիկանց կուսէ սակաւ ինչ պարապորդ թողեալ ընդ պարիսպն, զորս մարթ է կարծել և եկեղեցի և սենեակ, զի ի փլածոյն հայելով ոչ բաւեմք ճըշդիւ սրոշել ինչ, և մինչև ցաստ աւարտի արևելակողմն, այն է լայնութիւն, զոր դառ քայլս իրրև հարիւր, և հասանէ ի գահավէժ:

Ընդ ի սրահին քարեայ սանդղովք ելանէ ի յարկ՝ փայտակերտ, ուր կան կըրկին սենեակք, ի միոյն յարևելս ելանէ ի հովանոց ինչ փոքրիկ պաշտոգամբ, որ առ կողիւ աւարտի սենեկացն, և ցրպարիսպն ոչ ժամանէ:

Այսոքիկ սենեակք, և որ ի միջի նոցա է սրահ վերնայարկ պատուհանաւորք որք դիտեն յԱխուրեան, և ձայն կարկաչավազ ընթացիցն լսի ի վերուստ, ի ներքոյ սորա է ախոռ. և արևմտակողմն երթայ մերձենայ ցմեծ խահանոցն, և աւարտի. Ահա այս ամենայն մնացորդք շինուածոցըն, յորոց սակաւք, ամբողջ. և բազումք է որ իսպառ, է որ մեծաւ մասամբ քայքայեալ, թող զորս որ յառաջ քան զմեզ կացեալ էր առաջնորդ, զքարինս ի միոյ տեղոց հանեալ՝ և այլուր փոխադրեալ էր, մինչև զփորագրեալ քարինս տեսաք կիսով չափ ծածկեալ: Աւ կարծեցեալ շինութիւն առնել վանացն, և սոքա ամենեքեան յերկրորդ դրանէն առեալ յաջմէ և յահեկէ սալայատակին և

ժամատան և եկեղեցւոյն ձգին, ունելով և զոմանս ի թիկունս, իւրեանց:

Իսկ ընդ արևմտեան դուռն մտեալ ի ժամատունն չորեքկուսի, չորիւք սեամբք և ութեակ որմասեամբք համակ միապաղաղ յորոց վերայ արկանէ զկամարն, և ութեակ զլիթովք բոլորակէ, բայց որ ի միջակին կայ, ի վերայ կամարաձգութեանն չորեքկուսի, ի վերայ բոլորէ շրջանակաւոր բոլորակ միւս և ս կամար. և ապա մարդահասակ բարձրութեամբ քարինս քանդակագործս, ի ստորին կողմն լայնանիստ, և ի վեր կոյս անձկագոյն, բերեալ կանգնէ, և մի զմիով ազուցանէ, որով սրածայր աւարտի կողմն, և մինայ և ս ծակ, յորմէ ձգէ զպարսն զանկագին:

Յարտաքուստ կուսէ այլ և ս քան ըզդիրս ստորոտի քարանց բոլորի որմունս բարձրացուցեալ, շրջանակաւ սիւնս կանգնէ, և ի վերայ խոյակաց նոցա զգմբէթն ելեալ ի վեր գմբէթաձև աւարտէ, կախեալ ի միջի և զերկուս զանդակս:

Ի ձախմէ դրանն ի միջոյ որմոյն դոյ ուղի ելից, որ ի ներքոյ սալայատակ ծածկութիցըն ձգէ զայլ և այլ կամարս առ ըզծանրաբեռնել լցուածովք զշինուածն. զոր բազմօք քայքայեալ են, առ որոնել զուցէ զպահենի ինչ, որովք օր ըստ օրէ ի կործանել է շինուածոյս, նա զի և առ մի ի սեանցն վնասեալ է, զոր կրկին երկաթեայ շրջանակօք պիղացուցեալ են, և զայն յամայութեան երկրին և յիսպառ պարապորդութեան վանացն զողք ի Վարսից մտեալ, ոչ միայն զորս գտեալ են զողացեալ, այլ և զայս ազուցեալ շրջանակս քանդեալ տարեալ են:

Ի մէջ ժամատանս առ ոտամբ տաճա-
րին ի հիւսսի կողմն, քար ինչ բարձեալ
իջանել լինի ի գեանափոր նկուղ ըստ
զրից տաճարին իրրե պահարան: Ար մը-
տեալ ելեալն էր, նա պատմեալ այլում,
յորմէ և մէք լուար:

Աստի մտանէ ընդ մի արեւմտեան դու-
ռն փառաւոր՝ որ ի միջակի սորա կայ հան-
դէպ դրան ժամատանն ի Տաճար անդր
զարմանաշէն, վայելչագիր և գեղեցիկ,
ի խաչաձևին առեալ բարձրացուցանէ ըզ-
կաթուղիկէն հրաշակերտ. համակ սպի-
տակ կրով բռեալ, որոյ մի և եթ է խո-
րան փառաշուք, և յերկուս կողմունս
պահարանք: Ի վերայ բռեալ որմոյն ըն-
դարձակ գիր գրեալ. որպէս և ի կամա-
րակապ գօտիսն, որք բառնան զգմբեթսն
ժամատան բազմադիմի փորագրութիւնք,
և մատուցեալ յիշատակաց արձանագրու-
թիւնք(8):

Յիշատակարանն Սանահնու վանաց՝
զայսր վանաց շինութիւն կամ հիմնար-
կութիւն ընծայէ Աբասայ թագաւորի, որ
թագաւորեաց յետ Աշոտոյ Շահնշահի
եղբոր իւրոյ երկաթ անուանելոյ, 929. և
գրէ այսպէս: «Աշ գի յաւուրս սորա
«փայլէին հովիւք բանաւոր հօտին Վրիս-
«տոսի իրրե զարեգակն յամենայն տեղիս,
«և պայծառացան ջահապէս հաւատ
«քրիստոնէական. և ի բազում տեղիս շե-
«նեցան յորովածախ ընչիւք գեղեցկաշէն
«և գմբեթաւոր եկեղեցիք Վրիստոսի. և

(8) Ապաքէն քանի քանիցս յայս վանս եր-
թալ պատահեաց. մինչև և ամսօրեոյ կալ. ուս-
տի արժան է անգոսնել, թէ չէր հնար յայն մի-
ջոցս համահաւարել զարձանագրութիւնս ամենայն:

«վանորայք Վրիստոսակրօն միաբանա-
«կեցաց, յորս յ. և Ղ՛Մ. և Ղ՛. և յայլ
«բազում միայնարանս ըստ իւրաքանչիւր
«չափու ժողովեալ ի մի վայր. որք ամե-
«նեքեան առաջի աչացն Աստուծոյ թը-
«ւեալ են. . . և մէք յիշատակութեամբ
«զանուանս հռչակեալ վանորէիցն ար-
«ձանացուսցուք: Առաջին վանքն Սա-
«մրջաձորոյ. և զկապուտ քարն ի գա-
«ւառին Արշարունեաց, և զՎարեվանքն
«ի Շիրակ գաւառի, և զհռչականուն
«ձոռոմոսի կոչեցեալ վանք,»:

ձիմնագիր վանացս և առաջին վանա-
հայր եկաց Յովհաննէս վարդապետ, զոր-
մէ գրէ Ասողիկ. «Իսկ ի գաւառին Շի-
րակայ ձոռոմոսին կոչեցեալ վանք, շննե-
«ցաւ ի ձեռն Յովհաննիսի, որ էր զար-
«դարեալ յամենայն առաքինութիւնս,
«ևս առաւել յողորմածութեան զարդս:
«Վասն զի ողորմածութեամբ և առա-
«քինութեամբ բաշխէր. մինչև ի զղես-
«տուցն իւրոց մերկանայր զամենայն ի
«բաց, յորժամ աղքատաց հանդիպէր.
«և անցաւորաց և ճանապարհորդաց
«հանգստարան պատրաստէր զտեղին,
«մինչև հանգեւլ իրր յիւրեանց տան ա-
«մենայն օտարաց. որ մինչև ցայսօր երևի
«նոյն նշան ողորմածութեան տանն յայ-
«նում,» : Գ. 7:

ձոռոմոսի կոչեցաւ այս վանք, զի բա-
զումք ի կրօնաւորաց աղղիս մերոյ տե-
սեալ թէ անդադար ի վրդովման է ձա-
յաստան, դիմեցին յաշխարհն Յունաց,
յըգերացիս և յայլ սահմանս, վանս
հաստատեցին. և հետ զհետէ այլք զնա-
ցեալ կրօնաւորէին, կամ ի ձայոց ցրուե-
լոց յայնոսիկ կողմանս:

Չայնու ժամանակաւ սաստկացուցեալ էին Յոյնք զմաղձ դառնութեան չարաստից սրտից իւրեանց յեպերել յերգի ծանել ղեկեղեցիս մեր. և չար քան ըզ՝Աեստուրականս և զԼւտիքականս համարել. զձէսս և զարարողութիւն և ըզ՝խորհուրդս եկեղեցւոյս մերոյ անվաւեր ասել, հալածանօք չափ բռնանալ ի վերայ. և զորս յինքեանս շրջէին, կրկնէին զմկրտութիւնս, և ոչ տային զանուն ազդիս առանց մեծի ինչ անպատիւ կոչմանց:

Եւսմ ամենայնի կրօնաւորք ազգիս մերոյ չկարելով այլ ևս տանել, և լսելով թէ յաւուրս Աբասայ խաղաղութիւն թագաւորէ ի Հայս, նա գուցէ լաւ իսկ համարեցան յանօրինաց չարչարանս կրել, քան յանուանեալ քրիստոնէից զայդչափ նախատինս ընդունել, ուստի սկսան դառնալ ի հայրենիս անդ իւրեանց, և կամ վարեցան ի Յունաց:

Եւ զի այս Յովհաննէս վանահայր ի Հոռոմոց եկն. զնա և զայլ միաբանս նորա որք ընդ նմա էին, սկսան և Շիրակայ բնակիչքն կոչել Հոռոմոց երիցունք, և զվանսն՝ որ ի նոցանէ կոչեցաւ Հոռոմոցի կամ Հոռոմոսի վանք. իսկ արձանազիր նորա դնէ Հոռոմուլոսի վանք: Իսկ առաջին հիմնարկութիւն սորա լինել պարտ է յամին 935:

Իսկ այս եկեղեցի, այն է տանձարն և ժամատունն շինեցաւ ի թագաւորէն ի վանահայրութեան Յովհաննու:

Չայգին իւր որ ի Աողբ ետ յիշատակ վանացս. և հարիւր բեռն աղ յամենայն ամիսս, չէ պարտ զարմանալ ընդ այսչափ բազմութիւն բեռանցդ. զի բաց ի գործածութեան պիտոյից իւրեանց, և կեն.

դանեաց իսկ հարկաւորի, նա և զաւելորդսն վաճառէին, կամ փոխանակէին ընդ այլոց կարեւորաց:

Եւս և զպիտոյս յընդեղինաց առատ ընծայեալ էր, զի գրէ, բաց յամենայն ձարից, ընդ դռադ ձար որպէս դուք իսկ այդր տարակուսեալ էիք, ոչ սակաւ և ես աստ, ուստի և բազմօք զիտակն կացի, գուցէ սխալանք քանդակողին են, նա զի յաւարտ տողին էր հասեալ, գուցէ կրճատեալ իցէ, զի և ես բազմաց հարցաբան եղէ, չէք ի գործածութեան բառք իբրև ձաւար նշանակել:

983: Եւս վանք մասամբ ինչ այրեալ եղև յԱմիրայէն Գուենոյ, որ զըրմամբ Մուշնդայ թագաւորելոյ ի Աարս ասպատակէր զՇիրակ, յաւուրս Սմբատայ:

1019: Սարգիս Աթոռեղիկոս յաջորդեցուցեալ իւր զՊետրոս գետ սգարձ, յայս վանս առանձնացաւ. և յետ ամաց ինչ վախճանեալ, աստ ամփոփեցաւ:

Եւս վանք յետոյ եղև եպիսկոպոսարան. ուր նստէր Առաջնորդ Աարուց և Շիրակայ, և Չարիշատու. և Աղղուան այլ Առաջնորդ նստէր. երկոքին ևս ընդ իշխանութեամբ Աջմիածնի. յոր և երթայր պտղիական ողորմութիւն վիճակացրս:

Իբրև հարիւր ամօք յաջորդեալ է աստ յառաջնորդութիւն Յովհաննէս եպիսկոպոս ոմն մեծարու, ծանրաբարոյ, և տընարար, սա բազում շինութիւնս արարեալ է, որ առ դրամբն կան և ի ձախակողմն՝ սենեակ, ախոռ և ըն, հանդերձ պարսպաւ այնր կողման շինեալ է. զԶուրն Աեաիկլերու, որ գուցէ յառաջագոյն կայր և խանդարեալ էր ձանապարհն, դարձեալ

ածեալ է մինչև ի Թերակղզին մօտ ի Վանս, առ շրջել զջրաղացս, և ուողայնել զառաւուտից անդաստան: Օւամենայն պիտոյս կարևորս տանն ի կարգի եղեալ, զամենայն հանդերձանս մշակական իրողութեանց կազմեալ յարգարեալ, ի վանացն երկու քօթան ելանէր ասեն, և ինքն վրան հարեալ, երբեմն գնայր դիտէր, և վարձատրէր զաշխատաւորս:

Երբեմն երբեմն իջանէր ասեն ի մառանըն դիտել, և աթոռ եղեալ բազմէր, կոչէր զառաջեաւ զանտեսն և ասէր, իմ տուն ամենայն բարութեամբ առատ և լի է. բայց խնայելով վարեցիս, զի ցորչափ կան, յայնժամ պէտք են չմխել. և եթէ սպառեսցի, յայնմ հետէ զհօնջ օգուտ է և խնայելն:

Յետոյ Աւետիք եպիսկոպոս ոմն ևս կացեալ ընդ երկար, փորձանօք ինչ, կամ ի գաւաղրութենէ Խաթուն օլլեաց՝ քար ի վերայ անկեալ մեռանի, գերեզման նորա անվէմ կայ ի ժամատան:

Օկնի Ստեփան եպիսկոպոս Չախաւեան, յաւուրս նորա գաղթեցան ժողովուրդք յարևելեան Շիրակ, որոյ անդ եկաց Առաջնորդ ժամանակ ինչ:

Հուսի ուրեմն, որ ի վերջէ կայր առաջնորդ, և նա զորս կայրն ի Վանս առեալ անց. և յայնմ հետէ առաջնորդութիւն տեղւոյն անց ի Վ. Պօլիս:

Ազաբէն ընդ այսչափ մեծադործ շինուածս, ընդ կաթուղիկէս, ընդ ձևս ձևս կամարաց, գմբեթաց՝ անհնարին է ոչ զարմանալ. և զօվութեամբ յիշատակել զժամանակին եռանդն և զբարեպաշտութիւն, որք թէ ի միում ժամանակի, և թէ հետ զհետէ ի նոյն բարեպաշտեցին:

Որոց նպաստամատոյց են քարահան. քացրն յաճախութիւն և պէսպիսութիւն և կակղութիւն շուրջ զգետեղերբն յաջմէ և յահեկէ առատացեալ. և դիւրատաշ են այնչափ. զի մի յաջողակ և ճարտար քարատաշ յերկոտասան աւուրս որչափ բաւէ զործել, աշակերտ նորա ի միում աւուր նոյնչափ ողորկեալ կոկէ դիզէ:

Եղեալ ի շինուածս յորձաքար դառնան. և սակաւ կրով ընդ միմեանս կցեալ՝ յարմարին և զանգին. անձրեք և արեք յաւէտ պնդացուցանեն, և ձուլին ի մի մարմին, զի և հարթաձև ուղղաձիգ կամարք անգամ դեռ կան մնան ի կայի:

Մեծագէս զարմանալ արժան է և ընդ արուեստագիտակ ճարտարապետան, որք չեն թողեալ մի ձև կամարաձգութեան, զոր ոչ աստ բովանդակեալ իցեն:

Այս հաստակաւորոց շինուած կարացեալ է դիմակալել զանազան երկրաշարժութեանց, և այլոց փնասուց, բայց անտերունջ և անխնամ կալ մնալ իւր ի նեղ արկանէ զնա, որով օր ըստ օրէ ի քակտումն երթալով երթայ. և առ յետինսն բազմօք ևս աւաղելի լինի:

Հարկ իսկ էր հայրենասիրաց Ազգիս զսա փոխարէն Անուոյ, յորմէ հաղիւ երկուց ժամուց ժանապարհաւ հեռի կայ, խնամել և ի շինութեան ունել: Եթէ ըստ կարգի ժողովելոյ զգրամս ի վիճակաց ի վճար պարտուցն Երուսաղէմի, մի և եթ վասն սորա արասցեն, և նախ զջուրն Աետիկերու ածցեն, և երկրորդ մի քօթան լծեսցեն, բերք ընդարձակ սահմանաց անդաստանաց նորա, բաւականացուցանեն զնա, և շինուածոյն իսկ նպաստա-

մատոյց լինին, որով միայն լինի ուղի յորդել և առ այլ:

Այլեալ առաջին դրանէ զՏիւսսի և զարևմտեան կողմամբ կայ զիւղն, ուր այժմ են հինգ վեց տունք. աղքատագոյն քան զվանքն, որոց բոլորքն ի միասին գոնէ չունին մի քօթան:

Անտի ի վայր իջեալ ի ցամաքեալ տեղի գետոյն առաջնոյ գնացից, և ընդ այն անցեալ ելանէ ի սակաւ ինչ բարձրադիր բազուկն, յորում է գեղեցկաշէն փոքրիկ տաճար ինչ կաթուղիկէիւ. որմունք նորա բռեալ, ուր կայ և երկար յիշատակարան:

Ինձ թուի թէ ընթերցայ անդ զանուն եկեղեցւոյս սուրբ Արրորդութիւն, զոր հայրենասէր ոմն ի Հայաստան լրագրին սուրբ Սարգիս ասէ. և առ նովաւ դնէ գերեզման Սմբատայ թագաւորի, որում ես ոչ զիպայ:

Ապաքէն Ամբատ ա. ի Գուին ի Յուսփոյ չարաչար տանջեցաւ, և զխոստովանողական մահ ընկալաւ. յայնժամ և թագազուն տոհմականք յԱրնջակ բերդ էին ամրացեալ, ոչ երևի ածել զմարմին նորա աստ. և Յովհաննէս կաթուղիկոս ոչ յիշէ զտեղի թաղման նորա՝

Ապա մարթ է ասել՝ թէ Ամբատ բ. իցէ. որոյ հետ թաղմանն՝ յորժամ յերազոյ կնոջ միոյ թէ Ամբատ կենդանի կայ ի գերեզմանի. քաղաքն վրդովեցաւ, Գագիկ Շահնշահ ետ հանել զնա ի գերեզմանէ, զի տեսեալ զդի նորա մեռեալ, հանդարտեսցին:

Յարեւելս կոյս նորա կայ և այլ փոքր քան զնա Տաճար կաթուղիկէիւ, և սուրբ Գէորգ. ի յետուստ կուսէ խորանի նո-

րա դեղնագոյն կամ կարմրագոյն սրբատաշ քարամիք դամբարան, ի ձև իմն եռանկիւն կամ օրօրոցի աւարտեալ. ի հարաւահայտեցիկ կողմն քանդակեալ « Գագիկ թագաւոր », :

Ան և այլ երեք զմեթաւոր մատրունք կամ գերեզմանապարփակ յարկք, որք հնար է թէ թագազուն սերնդոցն Բագրատունեաց և Թագուհեաց իցեն դամբարանք. ուստի և ասել արժան է, թէ Բագրատունի թագաւորաց և թագազարմից գամբարանք, աստ, ի Բագարան և յԱնի էին, հնար է իմանալ թէ պատմաբանք որք ասեն յԱնի թաղեցաւ, և զայս ևս իմանալ. հայեցեալ ի մերձաւորութիւն տեղոյն, և յընդարձակութիւն Անոյ բնակչաց:

Իջեալ ի բազկէ ի միւսոյ կողման ցամաքեալ տեղին, անց ցամաքին քարակրտուրք բարձրանան, և տան ճանապարհ ելից առ կամուրջն, զոր ի բարձուէ շինեալ են:

Իսկ յուս անդ բազկին, զոր խորտակեալ է գետն, կացեալ իցէ այլ շինուած, չէ յայտ. մարթ է գուշակել թէ առ գերեզմանաւքս պարտ է լինել և վանաց, ի մնացորդս բազկին ոչ նշմարեցաք գոնէ զաւերակս այդպիսի շինութեան:

Մինչև ցայս վայր գրեալ զիւղորոյք բաժնիս, էին ի սահմանակցութեան Չարիշատու, առ Սարուց և առ Ախուրեան գետովն:

17: Անի. Տ. բացատ յԱնոյ քաղաքէն զիւղ ի բարձուէ ջրոյն ձորոյ Ծաղկոցաց:

Մողզերդ աւերակ և անբնակ այժմ. յերից կողմանց շրջափակեալ ձորովք ի

հաւասարութեան վայրացն բարձրացեալ իբրև ի բլրի. պարխսպն կանգուն, և եկեղեցին կործանեալ ասացին, սովին անուամբ բերդ կամ աւան ոչ տեսաք ի պատմադիրս յիշատակեալ, գառնաւք շրճիւք ի վեր ընդ ճանապարհս գնացից ի Կարուց՝ զգիւղսն թուել :

18: Ճ'ալա. Հ. Տ. 19: Արազ օղու. Տ. 20. Գայնալըխ. Տ:

21: Խօզլուճա. Տ. գեղեցիկ և բարձրադիր վանք. յորում են ասեն բազում արձանագրութիւնք: 22. Ալաճա. Տ. կիսով չափ աւերեալ վանք:

23: Կորխանա. Տ. փոքր վանք, Խըրխպուլախ. Պուլանըխ. Աիկեօզ ամայի գիւղատեղիք. յԱիկեօզ և աւերակ վանք:

24: Հաճի-վելի. Հ. Տ. բերդ. վեց ժամաւ յԱնեոյ նոյնչափ և ի Կարուց հեռի կայ. և արօտական վայրք սորա յոյժ յոյժ ընդարձակք:

25: Սուպաթան. Տ. սորա ջուրք յառաջ խաղացեալ սուզին ընդ երկրաւ:

26: Վիւլ օրեն. Տ:

27: Վերին Կեօիկեր. 28. Ներքին Կեօիկեր: 29. Օրթա Կեօիկեր. Հ. ի ստորոտս երկց գիւղիցս բազում ակունք բղենն. որք են ասեն գաղտնի ուք ջուրցն սուզելոց ի Սուպաթան. և զբազում ջրաղացս շրջեն ի ձմերան իսկ ոչ սառելովն:

Առ հնովք պարտ է լինել անուն տեղեացս Գետուկ. զի յարձանագրութիւնս տեսանի գրեալ. զջաղացն իմ որ ի Գետուկ ետու յիշատակ: Ապա և այժմեան անունդ Կեօիկեր՝ է աղճատեալն բառիս Գետուկ. առեալ ի ջուրց անտի որ միացեալ կազմեն զգետակ, որ ի վեր քան ըզ-

Վայլար մտանեն յԱխուրեան: Ի ջրոյ աստի մասն ինչ տռ աւերակ Խարախուլէիւ ածեալ տարեալ են ի Խօշավանք. զմնացորդս առուատեղեացն տեսաք և մեք:

30. Խալիֆ օղու. Տ. այլ և աւեր գիւղքս Մշկօ. և Խըրխլար: Համեմատութեամբ ընդարձակութեան հողոյն և բարեբերութեանն, մին ի չորից մասանց հազիւ է այժմ երկիր մշակեալ. ուր յըստեն դրամէ ցորեան գարի, կտաւատ. իւղ, պանիր, և անասուն, զորս և նախապարտաստ գրամովք գնեալ վաճառականք, ածեալ տանին յԱ. Պօլխս:

Արկարութիւն այսր բաժնի առ Ախուրեան գետով հինգ. առ Կարուց գետով վեց. և առ սահմանս Կարուց նոյնչափ ժամուց է ճանապարհ:

(Մեայեւն է յեդուդայ):

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԽԱՂԻ ՆՇԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԹՈՒԹԵԱՆ ՄԷՔ:

Մանուկների հետ վարմունքը մեզ ծանօթացնում է մարդի ամենաքաղցր. ամենագրաւօղ կողմերին. ինչ որ մարդս բարձր, ազնիւ, մեծ յատկութիւններ ունի,—բոլորը տեսնումենք մանուկների խաղերի մէջ նոյն պարզութեամբ, ինչպէս այր ամուսնի աշխատութեան մէջ պատանեակի ձգտմունքի մէջ, կնոջ հոգսերի մէջ,—իսկ շատ անգամ առաւել պարզ և որոշ կերպով ևս:

Ապառասէ երբեմն որ դառն փորձութեան ծանրութեան տակ, մարդկային գործերին նայելով, սկսումէ պակասել